ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2013 թվականի N 496-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ՀԱՄԱՐ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ>> ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի N 503/ԳՇ հրամանի 2-րդ կետի պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Անցկացնել 2014 թվականի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի համար վարորդ-մասնագետների ընտրություն:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի զինվորական կոմիսար, գնդապետ Ա. Պետրոսյանին՝

1) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համար վարորդ-մասնագետներ պատրաստելու գործընթացը կազմակերպել ըստ <<Հայաստանի ԴՕՍԱԱՖ>> կազմակերպության կենտրոնական խորհրդի կողմից կատարված հաշվարկների պատրաստության պլանի և կնքված պայմանագրի,

2) խիստ հսկողություն սահմանել ուսումնական դասընթացին ներգրավված ունկնդիրների հաճախումների, պարապմունքների անցկացման որակի, ուսումնադաստիարակչական գործընթացի և պլան-առաջադրանքի կատարման նկատմամբ,

3) ուսումնական դասակները համալրել՝ առաջին զորակոչի համար զինվորական ծառայությանը պիտանի՝ մինչև 1996 թվականի հունիսի 30-ը, երկրորդ զորակոչի համար՝ մինչև 1996 թվականի դեկտեմբերի 30-ը ծնված զորակոչիկներով,

4) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունք ստացած զորակոչիկներին չընդգրկել ուսումնական դասակներում,

5) վարորդի մասնագիտությամբ մասնագետներ պատրաստելու նպատակով ընտրված զորակոչիկներին բժշկական հանձնաժողովների կողմից անխտիր ենթարկել բուժզննման,

6) հսկողություն սահմանել <<Հայաստանի ԴՕՍԱԱՖ>> կազմակերպության ուսումնական հաստատություններում դասընթացներն ավարտած զորակոչիկների հաշվառման նկատմամբ՝ հետագայում նրանց համապատասխան զորամասեր բաշխելու նպատակով,

7) <<Հայաստանի ԴՕՍԱԱՖ>> կազմակերպության կենտրոնական խորհրդի նախագահի հետ համաձայնեցված՝ ուսումնական տարվա առաջին հոսքը սկսել 2013 թվականի հոկտեմբերին և ավարտել 2014 թվականի փետրվարին, երկրորդ հոսքը՝ 2014 թվականի մարտից մինչև հուլիս,

8) զորակոչիկների պատրաստությունն իրականացնել <<Հայաստանի ԴՕՍԱԱՖ>> կազմակերպության ուսումնական հաստատություններում՝ վարորդների պատրաստման ծրագրի լրիվ ծավալին համապատասխան:

3. Սույն որոշման կազմակերպումը և կատարումը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի զինվորական կոմիսար, գնդապետ Ա. Պետրոսյանի վրա:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ